

Աշոտ Ն. Հայրունի

Պատրմ. գիտ. դոկտոր

**ԲԱՖՖՈՒ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ***

Բանալի բառեր–տեր Թողիկ, Հայրիկ, եկեղեցի, Սիմոն Պատվելի, իդեալական կրթօջախ, բարոյական մեքենա, Ճանճուր Իվանիչ, թաթոսականություն, Մուշեղ, ցեղական առանձնահատկություններ, Ներսես Մեծ, քաղաքակրթող տարր:

Բաֆֆու ստեղծագործական առաջին քայլերը, կարծես պատմական անհրաժեշտության թելադրանքով, գուգադիպեցին արևելահայ հասարակական կյանքում բեկումնային նշանակություն ունեցած լայն տեղաշարժերի սկզբնավորմանը: Դարերով սրբագործված նահապետական սովորույթներն ու ավանդական կենսաձևերը տնտեսական նոր հարաբերությունների պայմաններում անշրջելի նահանջ էին ապրում՝ անկարող լինելով դիմադրելու «նորի» հաղթարշավին, որը եվրոպական ազատախոհության կարգախոսներով նվաճում էր կյանքի բոլոր ոլորտները: Անցումային այս գործընթացը, որ պետականության պայմաններում կարող էր վերահսկելի կամ ուղղորդելի լինել, աղետալի հետևանքներ էր խոստանում քաղաքական ինքնուրույնությունից զուրկ ժողովրդին՝ ուղեկցվելով վերջինիս գոյատևման կովան–արժեքների կորստյամբ:

Արդեն պատանեկության շրջանում Բաֆֆին խոր վիշտ է ապրում՝ հասու դառնալով նորամուտ հոռի և բացասական երևույթների արմատավորմանը: Մի ամբողջ շարք բանաստեղծություններում («Կտակ», «Օսան», «Մոդա», «Շռայլություն», «Սոֆի» և այլն) այդ իրողության համակողմանի և խտացված պատկերման հետ մեկտեղ Բաֆֆին անընդհատ ընդգծում էր արտաքին փայլի, գույների և շքեղության տակ քողարկված ապագայնացման ամենակուլ վտանգի դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Այդ հանգամանքը նրա բանաստեղծություններում հիմնված էր գերազանցապես դիտողական տպավորության վրա, իսկ հետագա ստեղծագործություններում բնորոշվելու էր կապերի ու երևույթների բազմազանության

* Հոդվածն ընդունվել է տպագրության 18.07.2021:

Վեմ համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) ցրաթի, թիվ 3(75), հուլիս–սեպտեմբեր, 2021

համադրավերլուծական ուսումնասիրությամբ:

«Հայ կինը» հոդվածում անդրադառնալով նորամուծությունների «բաբելոնյան խառնաշփոթություն» հիշեցնող Թիֆլիսին՝ Րաֆֆին ուշադրություն էր հրավիրում այն փաստի վրա, որ հեղաբեկվող նահապետական հարաբերություններին փոխարինելու եկած «նորը» իր հետ մխիթարական ոչինչ չի բերում, այլ միայն շվայտ, ցոփ բարքեր, փողոցի ապականիչ ազդեցություն. «Ոչինչ ավելի վնասակար չէ կարող լինել, - գրում է նա, - քան թե այն, երբ հանկարծ քանդվում են դարերով հաստատված և կյանքի մեջ մտած սովորությունները և առանց փոխարինվելու նոր ու ավելի բարոյական հիմունքներով, նրանց տեղը դրվում է կատարյալ համարձակություն»¹: Միայն արտաքին ձևերի փոփոխության մեջ է Րաֆֆին հայտնաբերում եվրոպական քաղաքակրթության կարծեցյալ դրական ազդեցությունն ու դրա հետևանքները, որոնք վերոհիշյալ «բարոյական հիմունքների» անտեսման պայմաններում երբեք ցանկալի հունով չեն ընթանա և դրականորեն չեն փոխակերպի հայ մարդուն, քանի դեռ վերջինս «վուտեմեն ինչրու բողազը Փռանգստանու է ու գլուխը կի էլի էն է մնացի»²:

Նորի անխնա դատապարտումը Րաֆֆու հայացքներում բնավ էլ կարոտի ու ափսոսանքի տրամադրություններ չի արթնացնում կորսված հնի հանդեպ: Նահապետական բարքերի հեղաբեկումը համարելով կյանքի օրինաչափ պահանջ՝ նա միաժամանակ չէր կարող անտեսել այն, որ նահապետականի հետ տեղի էր տալիս և ազգայինը: Ուստի կոչ էր անում անհանդուրժող լինելու անցման շրջանում հայ իրականություն ներթափանցող բոլոր բացասական երևույթների հանդեպ: Դրանց գոյության, կենսունակության և տարածման հիմնական պատճառը, Րաֆֆու համոզմամբ, համատարած անզարգացածությունն է, որը հիմք է դառնում առանց հաղորդակցվելու քաղաքակրթության բուն խորհրդին կուրորեն հպատակվելու և ստրկանալու նրա առանձին կողմերին միայն:

Ինքնին ծնվում է դարաշրջանի հիմնական հարցը, որին հարկադրված էր պատասխան տալ ամեն մի առաջադեմ գաղափարական գործիչ. կա՞ն արդյոք և որո՞նք են ազգային առաջադիմության ճշմարիտ ընթացքն ապահովելու ունակ ուժերը, և ինչպե՞ս կարելի է հասնել դրանց նպատակային կենսագործունեությանը: Խնդիրը հենքային նշանակություն ունեցող հայ հասարակական կյանքի գրեթե բոլոր (թեկուզ և հակամարտ) հոսանքների համար, որոնք ունեին ազգային ծրագրեր ու գաղափարներ և ձգտում էին հետամուտ լինելու դրանց իրականացմանը: Բնականաբար, առաջին պլանում էր և քննության պետք է ենթարկվեր լուսավորականու-

1 Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, Եր., 1964, էջ 345:

2 Նույն տեղում, էջ 53:

են նրա սրտից, էլ ոչինչ չէ մնում նրան օրինավորության մեջ պահելու համար, և նա դառնում է ամենասարսափելի անբարոյական»⁵:

Հրապարակախոսի այդ տեսակետը բազմիցս փաստարկվում է երևույթը մարմնավորող գեղարվեստական կերպարների միջոցով՝ Հուրի Խան Դայա, պառավ Մարթա, գրբացների, դայակների և վիուկների մի ամբողջ շարք, որոնց գրոտեսկային, բայց և խորապես ռեալիստական կերպարները Րաֆֆու գեղարվեստական երկերում ճշմարտացիորեն ներկայացնում են ժամանակի ընտանեկան դաստիարակությունը՝ իր բոլոր հետևանքներով: Այն, ըստ գրողի, իր հետ դրական ոչինչ չի բերում, քանի որ կարող է ուսուցանել միայն բռնակալություն, սնահավատություն և նախապաշարմունքներ: «Մեր ընտանիքը չունի դաստիարակության այն որոշ սկզբունքը, նշում է գրողը, որ անհրաժեշտ էր մանուկ սերնդի նախնական մարզանքի համար»⁶:

Մանկան կրթության և դաստիարակության առաջին հաստատությունը, այսպիսով, ըստ Րաֆֆու, ոչ միայն զուրկ էր դրական լիցքերից, այլև հաճախ հատկանշվում էր բացասական դերով ու գործառնությամբ, քանի որ նախ և առաջ ստրկամտության կնիքն էր խարանում ձևավորվող ու աճող ներաշխարհի վրա: Գուցե այն, ինչին ի գորու չէր ընտանիքը, կարող էր իրագործվել դպրոցի՝ հայ հասարակական կյանքում այդ երկրորդ կրթօջախի միջոցով: Այստեղ ևս, սակայն, գրողը մխիթարական ոչինչ չի տեսնում: «Մեր դպրոցները, գրում է նա, ...ամենաթշվառ դրության մեջ են, նոր իմաստակների ձեռքում խաղալիք են դարձել: Նրանք կորցրել են հին ձևը, որն թեև փտած էր, բայց ինքնուրույն էր և դարևոր փորձերի վրա էր հիմնված»⁷:

Կրթության և կատարելագործման հակումը հայ ազգային խառնվածքի բնորոշ հատկանիշ համարող Րաֆֆին համատարած անզարգացածության արմատները հայտնաբերում է գլխավորապես կրթական համակարգի կազմակերպական դրվածքի ներսում, որը և նա, ներկայացնելով դպրոցական կյանքի ընդհանրական պատկերը, ենթարկում է համակողմանի քննության: «Ժողովրդական վարժապետներ» հոդվածում նա նշում է, որ վերջին շրջանում երևան եկող լայն հետաքրքրությունը ուսուցման խնդրի հանդեպ և դպրոցների թվի զգալի աճն անկարող են գիտակցական կյանքում որակական էական փոփոխություններ առաջ բերել, քանի որ դպրոցական գործն առավելապես կրում է ինքնանպատակ բնույթ: Անձնական շահեր, կամայականություններ, ներքին խմորումներ, կուսակցական պայքար, որն ավելի շատ մանր կրքերի, քան գաղափարական սկզբունքայ-

5 Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 383:

6 «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», Եր., 1986, էջ 238:

7 Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 275:

նության դիրքերից էր մղվում: Հոգաբարձության, տեսուչների ու վարժապետների եսակենտրոն գործունեությունը, մասնագետների ընտրության հարցում մասնագիտական որակների անտեսումը, զանազան խաբեությունների և անազնիվ գործարքների շրջապտույտը՝ իբրև դպրոցական կյանքը բնորոշող ընդհանրական երևույթ, դպրոցը գրկել են իր հիմնական գործառույթներից՝ այն դարձնելով միայն «փափուկ հասակի ըսպանդանոց»: Սեփական մանկավարժական փորձը (Թավրիզի և Ագուլիսի դպրոցներում) ևս Ռաֆֆուն բերում է այն համոզման, որ կրթական համակարգի բարեփոխումն անհնար է առանց հասարակական հսկողությամբ իրագործելի՝ դպրոցական գործի կանոնավորման: Այդ կերպ միայն կարելի է ձեռքագատվել ժողովրդական դպրոցին բնորոշ այնպիսի չարիքներից, ինչպիսիք են «ինքնագործունեությունն» ու վարչական կամայականությունները: Ռաֆֆու հայացքից, անշուշտ, չէր կարող վրիպել, որ դրանց հիմնական պատճառը որոշակի մեթոդաբանական հիմքերի և կայուն դպրոցական ծրագրերի բացակայությունն էր: «Նոր վարժապետը չէ շարունակում հնի սկսածը,- գրում է նա,- այլ միշտ վերադառնում է սկզբին: Այդ առաջանում է վարժապետների տարբեր կրթութենից, որոնք չեն ենթարկվում մի որոշ մանկավարժական եղանակի, այլ ամեն մեկը ուսուցանում է, որպես ինքն է սովորել... Վարժապետները չեն ենթարկվել դպրոցի մեջ ընդունված մի որոշ պրոգրամայի կանոններին, այլ միշտ պրոգրաման է ենթարկվել վարժապետների կամայականությանը: Այսպիսի դեպքերում, հայտնի բան է, դպրոցը կկորցնե իր նշանակությունը և մի որոշ նպատակի ծառայել կարող չէ»⁸:

Դպրոցական կյանքի այդ իրական պատկերի հիմքում Ռաֆֆին հայտնաբերում է նաև անցումային փուլի բացասական ներգործությունը: Ինքնուրույն և անհատական գործելակերպի միտող եվրոպական մանկավարժությունը հայ իրականության մեջ բնականաբար պետք է փոխակերպվեր անթույլատրելի կամայականությունների, գաղափարագուրկ և անբովանդակ ձևերի ընդօրինակումն անխուսափելիորեն պետք է հանգեցնե նման ծայրահեղ և անհեթեթ դրսևորումների, որովհետև անցումը տեղի էր ունենում հասարակական գիտակցության անզարգացածության պայմաններում: «Մեզանում մի առած կա, թե «ագռավն ուզեց կաքավի երիշով (ընթացքով) գնալ, իր երիշն էլ կորցրեց», - նշում է գրողը: - Միշտ այդպես է լինում, երբ մարդ իր սովորականը թողնում է և նախքան սովորելու օտարի վարմունքի ձևերը, սկսում է ինքն էլ նույն ձևերով ընթանալ: Նա ծիծաղ է շարժում և ավելի ոչինչ»⁹:

8 Նույն տեղում, էջ 289:
 9 Նույն տեղում, էջ 290:

Դիտարկումները Րաֆֆուն հարկադրում են կյանքի եվրոպական արդիականացման իրողության հետ մեկտեղ հայ կրթական համակարգի բարոյալքման հետևանքը համարել (չբացառելով դրանց մասնակի պատճառակցական կապը) նաև այնպիսի բացասական երևույթի առկայությունը, ինչպիսին է օտարալեզու դպրոցների և օտարամոլության շեշտակի աճը: Ուսման արթնացող բնագոյն ի վերջո, իրատեսական դառնալով, դադարում է հանդուրժել վերոհիշյալ անսպասակ կրթակարգը, և մարդիկ ստիպված են լինում իրենց զավակների մտավոր սնունդը որոնել օտար կրթական հաստատություններում:

Այսպիսով՝ դպրոցական բնագավառի արտաքուստ իրարամերժ այս երկու ծայրահեղությունները (հնավանդ, քարացած նահապետականություն և ապագայնացում ու օտարալեզվություն) ոչ միայն ինքնին գոյություն չունեն, այլև որոշակիորեն պայմանավորված են մեկը մյուսով: Հրապարակախոսի վերոհիշյալ դիտարկումներն էլ ավելի պատկերավոր ու համակողմանիորեն արտացոլվում են գեղարվեստական պատկերներում:

Սիմոն Պատվելիի և տեր Թողիկի («Կայծեր») խտացված կերպարների միջոցով Րաֆֆին ի ցույց է դնում Թուրքահայաստանի ու Պարսկաստանի մանկավարժական կյանքի նկարագիրը: Բնության և բանականության օրենքներին հակադրվող նրանց հաստատություններում «միակ առարկաները, որոնք հիշեցնում էին, թե այն մթին և գերեզմանի պես խոնավ սենյակը դպրոց էր, էին՝ ֆալախկան և մի խուրձ դաժան ճիպոտներ նրա մոտ դրած»¹⁰: Ամմարդկային ծեծն ու պատիժները, գումարվելով վարժապետների անգրագիտությանն ու մանկավարժական գործից բացարձակ անտեղյակությանը, երեխաներից պատրաստում էին միայն կենդանի «դիակներ»: Բնութագրական է, որ Րաֆֆու քննադատությունն ուղղված է ոչ թե սիմոն պատվելիների, այլ նրանց մանկավարժության ասպարեզ նետող հասարակական պայմանների դեմ: «Մեր վարժապետը չարասիրտ մարդ չէր, նշում է նրա հերոսը, ընդհակառակն, նա շատ բարի էր: Այս բոլոր խստությունները, այս բոլոր անգթությունները առաջ էին գալիս նրա մանկավարժական հասկացողությունից: Նա այնքան հավատում էր ֆալախկային, որքան հավատում էր իր թախամաններին»¹¹:

Մեկը մյուսից ավելի զավեշտական, բայց և խորապես ռեալիստական դրվագները, բացահայտելով հայկական կրթօջախի դրվածքն ու հիմնական դիմագիծը, յուրովի նախապատրաստում էին «Ջալալեդդինի» հերոսին՝ տալու երևույթի ընդհանրական գնահատականը. «Խնում եմ այս բաժակը՝ առանց նվիրելու ձեզ, ով գիր և դպրություն: Դուք լցրեցիք մեր գլուխը ունայն, վերացական ցնորքներով: Դուք չծանոթացրիք մեզ մարդկային

10 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 5, Եր., 1985, էջ 350:
11 Նույն տեղում, էջ 360:

պահանջների հետ... Դուք ավելի զարգացրիք մեր մեջ սև նախապաշարմունքը և փակեցիք մեր աչքերը՝ լույսը և ճշմարտությունը տեսնելու համար... Դուք ավելի պնդացրիք մեր ստրկության շղթաները: Ձեզ ենք պարտական, ով գիր ու դպրություն, մեր այժմյան դժբախտություններով»¹²:

Սիմոն Պատվելիի և տեր Թողիկի՝ աշխարհիկ և հոգևոր կրթական հաստատությունների այդ երկու ներկայացուցիչների դասատվության եղանակները, ըստ էության, չեն զանազանվում միմյանցից: Անձնապես խիստ տարբեր այս երկու կերպարները՝ իբրև հասարակական առանձին շերտերի ներկայացուցիչներ, գործունեության բնագավառում փաստացիորեն նույնանում են՝ հավասարապես արժանանալով Բաֆֆու անվերապահ քննադատությանը: Ընտանիքը և դպրոցը՝ որպես կրթադաստիարակչական հաստատություններ, այսպիսով, Բաֆֆու կարծիքով, ինքնին անպատրաստ և անկարող են հասարակության լուսավորման և բարեփոխման գործառույթն իրականացնելու: Դրա պատասխանատվությունը, բնականաբար, առաջին հերթին պետք է կրեր նա, ով ամենամեծ ազդեցությունն ուներ այդ նույն հասարակության վրա և այդպիսով կարող էր դառնալ լուսավորման ու առաջընթացի ջահակիրը, եթե միայն հասու լիներ իր այդ առաքելությանը: Դա եկեղեցին էր, ուստի հասկանալի է, որ Բաֆֆին եկեղեցուն՝ պետականության բացակայության պայմաններում ազգային համախմբման՝ պատմության քննությունը բազմիցս հաղթահարած այդ կարևորագույն հաստատությանը, պետք է առանցքային տեղ հատկացներ իր հրապարակախոսության մեջ, այն բազմակողմանի քննության ենթարկեր՝ նրան իր թերություններից ու արատներից ձերբազատման կոչելու և իր վերոնշյալ առաքելությանը գիտակից ու ազգային լուսավորության գործին մասնակից դարձնելու համար:

Պատմության շղթայական զարգացման և երևույթների պատճառականության ըմբռնումը հիմք է դառնում Բաֆֆու համար հայ իրականությանը բնորոշ զանազան երևույթների ինքնակայությունը հերքելու համար եկեղեցին հետազոտելու իր երկարամյա պատմության հոլովություն, անցյալի և ներկայի դիտակետերով քննելու նրա ունեցած դերն ու նշանակությունը ազգային կյանքում: Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Սամվելի» «Փակագծի մեջ» գլուխը: Հեղինակը, անշուշտ, հարկադրված էր քննական մոտեցում ցուցաբերել նաև պատմական աղբյուրների նկատմամբ և ձգգրիտ կռահումներ անելու համար զերծ մնալ հայ պատմագրության որոշ սուբյեկտիվ մոտեցումներից:

Փորձելով լուսաբանել այն իրողությունը, որ նոր կրոնի արմատավորումը և եկեղեցու իշխանության ընդլայնումը զուգադիպել են հայ պետա-

12 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 4, Եր., 1984, էջ 53:

կան իշխանության թուլացմանն ու քայքայմանը, Բաֆֆին վերադառնում է չորրորդ դար՝ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցած մեծ իրադարձությունների դարաշրջան: Հայ պատմագիրների կողմից այնքան հալածված վերջին Արշակունիների գործունեությունը նա մեկնաբանում է բոլորովին այլ տեսանկյունից՝ թագավորների և եկեղեցականների «անձնական» թշնամության հիմքում նշմարելով հակամարտությունը պետության և եկեղեցու միջև: Քրիստոնեությունն իր ճանապարհին ոչնչացնում էր հեթանոսական մշակույթն ու անցյալը, հիմնում անհաշիվ վանքեր՝ նրանց ենթարկելով նաև շրջակա բնակավայրերն ու հսկայական հողատարածքները: Այս կերպ տիրանալով երկրի հիմնական տնտեսական լծակներին՝ «եկեղեցին յուր բազմաթիվ վանքերով, գրավելով հողերի մեծ մասը, հետզհետե դառնում էր պետության մեջ ամենահարուստ կալվածատերը, մինչդեռ թագավորը սեղմված էր Արարատի նեղ սահմանների մեջ»¹³: Իսկ քանի որ տնտեսական գերիշխանությունն իր հետ բերում է նաև քաղաքական մենաշնորհներ, ուրեմն հասկանալի է, որ եկեղեցին, իր հիմնական գործառույթներից զատ, սկսում է միջամտել նաև պետական-կառավարական գործերին: «Թագավորը սարսափելով տեսավ, որ յուր պետության մեջ կազմվեցավ մեկ այլ պետություն՝ հոգևոր պետություն... Նա դարձավ ամենաբարձր և ամենասրբազան հեղինակություն, որի առջև ամեն գլուխ խոնարհվում էր: Թագավորը սուկաց, թեև ուշ հասկացավ, որ այդ հեղինակությունը արդեն այն աստիճան ուժ և զորություն էր ստացել, որ յուր ձեռքումն էր պահում արքայական գահը»¹⁴:

Անդրադառնալով եկեղեցու՝ քրիստոնեության խորհրդին համապատասխանող վաղեմի հիշարժան քաղաքականությանը, ի մի բերելով և առադրելով այդ մասին պատմագրության թողած տեղեկությունները՝ Բաֆֆին, սակայն, հանգում է այն մտքին, որ այդ ամենը, պայմանավորված միայն անհատական կամքի արտահայտությամբ, հետևանք էր ոչ թե անձը բացառող օբյեկտիվ անհրաժեշտության, այլ ավելի շուտ անձնական մղումներով կառավարվող պատահականությունների: Այս ըմբռնումը Բաֆֆուն օգնում է բացահայտելու եկեղեցու տարաբնույթ գործունեության հիմնական դրդապատճառը, հայտնաբերելու այն ճանապարհը, որը, սկիզբ առնելով դեռևս Գրիգոր Լուսավորչի հայրապետական տան անկումից, հայ հոգևոր իշխանություններին կանգնեցրեց բարոյալքման և այլասերման իրողության առջև: «Հայոց աշխարհի մեծ բարեկարգիչ» Ներսես Մեծը, ըստ Բաֆֆու, հարյուրամյակների պատմության մեջ այդպես էլ չունեցավ իր նմանակը, ուստի բնական է, որ նրա հիմնած վանքերն ու վանական

13 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 8, Եր., 1986, էջ 167:

14 Նույն տեղում, էջ 168:

միաբանությունները նույնպես հետագայում այլևս իրենց նախկին գործառույթներին ամբողջությամբ չվերադարձան:

Փորձելով պատմականորեն շարադրել կաթողիկոսների հաջորդափոխությանը պայմանավորված՝ եկեղեցու բարոյահոգեբանական նկարագրի փոփոխությունները՝ Րաֆֆին դրանք դիտարկում է ազգային-քաղաքական խնդիրների համատեքստում: Ինքնամեկուսացման միտումը, որ պայմանավորված էր մի կողմից՝ հայ ժողովրդի քաղաքական ծանր դրությամբ և մյուս կողմից՝ սեփական տնտեսական գերակայությունը պահպանելու ձգտումով, շարունակ ավելի ու ավելի բացասական երանգներ է հաղորդել եկեղեցու գործունեությանը: Այդ ինքնամեկուսացման բնական հետևանքն էր բազմաթիվ անապատների և եսակենտրոն հոգևորականության մի ստվար գանգվածի ծնունդը, որոնց Րաֆֆին ենթարկում է սուր քննադատության: «Անկարելի է չնկատել այն սպանիչ, վհատեցուցիչ ազդեցությունը, - գրում է նա, - որ գործում է անապատը իր շրջապատող ժողովրդի վրա, մանավանդ երբ այդ ժողովուրդը գտնվում է մտավորապես ստոր զարգացման մեջ: Գործունեությունը, եռանդը, աշխատանքը, սերը դեպի կյանքը դադարում է այնտեղ, տիրում է ընդհանուր մեռելություն, և վանքը իր շրջակա բնակիչներով ներկայացնում է մի ընդարձակ անապատ»¹⁵: Հատկանշական է, որ անապատների գոյությունը գրողը պայմանավորում էր նախ և առաջ ժողովրդի նվազ զարգացմամբ, ինչը նրան պետք է հիմք դառնար ասելու. «Անապատների թվից կարելի է իմանալ մի ժողովրդի թե՛ զարգացման աստիճանը և թե՛ գործունեության չափը»¹⁶:

Րաֆֆին արդեն բացահայտել էր հայ եկեղեցու ներկան պատմական անցյալին կապող տրամաբանական շարժառիթները, ուստի այս տեսանկյունից էլ նա սկսում է իր համաժամանակյա ուսումնասիրությունները: «Կղերական հարստահարություն», «Ինքնախաբեություն», «Հայերը Քարուլի մեջ», «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վրա» հոդվածներում հեղինակն իրական-առարկայական պատկերներով ցույց է տալիս հոգևորականության շահանդի քաղաքականության դատապարտելի համապատկերը և դրան կույր համակերպումը: «Մեր եկեղեցին այլանդակվել է, ասում ենք, փոխել է իր նախնական պարզ կերպարանքը, - գրում է Րաֆֆին, - դարձել է ծիսապաշտության, շնորհավաճառության և անհավատության մի գործարան: Դու անկրոն ես, անհավատ ես, պատասխանում են, եկեղեցու սրբության դեմ չէ կարելի խոսել... Մեր եկեղեցական կառավարությունը, ասում ենք, դարձել է բաշխրոզուկների վարչություն, կամայականությունը տիրում է կարգի ու կանոնների վրա, անարժանները առաջ են գնում, արժանավորները ձնշվում են: Իսկույն ստանում ես միևնույն հի-

¹⁵ Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 6, Եր., 1986, էջ 140:
¹⁶ Նույն տեղում:

մար պատասխանը, թե դու կրոնի դեմ ես խոսում... Մեր եկեղեցականները, ասում ենք, դարձել են անպիտան մշակներ, նրանց գիտությունը, նրանց վարքը չէ համապատասխանում իրանց հանձն առած պաշտոնին, նրանք ավելի գայթակղեցնում են մեր ժողովուրդը, իսկույն ցույց կտան Ներսես Մեծին, Սահակ Պարթևին և Մեսրոպին»¹⁷:

Բաֆֆու համոզմամբ՝ այս տխուր իրականության հիմքում ընկած է զարգացման օբյեկտիվ գործոնների բացակայությունը: Կարծրացած դոգմաները, կույր հաշտվողականությունն ու անհիմն լավատեսությունը մրցակցության ու քննադատության ցանկացած դրսևորում համարում են ոտնձգություն կրոնի դեմ՝ իրենց գոյության զենք ունենալով միայն անցյալի «վսեմ և պանծալի» հիշատակները:

Գեղարվեստական պատկերներն ու եկեղեցու ներկայացուցիչների բնութագրական նկարագրերը Բաֆֆու ստեղծագործություններում գալիս են ամբողջացնելու հրապարակախոսի տեսական մտքերի ճշմարտացիությունը: Տեր Մարուք, տեր Մարկոս, տեր Թողիկ... անուններ, որոնց շուրջ նողկալի արարքների մի ամբողջ ցանց է հյուսված: Խաբեություններն ունկան դարձնելով՝ նրանք համակված են միայն հարստանալու և իրենց կենդանական կրքերին հագուրդ տալու տենչով: Որքա՞ն բնորոշ են, օրինակ, Կարապետ հայր սուրբի և մղդսի Թորոսի կնոջ հետ կապված անցքը («Կայծեր»), տեր Մարութի երգիծված կերպարը («Սալբի»), որի օրհնություններն ուղեկցվում են հետևյալ կարգախոսով. «Իհարկե, դուք որ կաք՝ մեր սուրուն եք, իսկ մենք ձեր չորանը, պետք է ձեր կաթից ուտենք, ձեր բուրդից հագնենք, որ ձեզ էլ գայլերի բերանից ազատենք և խոտավետ արոտներում արածացնենք»¹⁸: Եվ վերջապես, մի՞թե ընդհանրական եզրակացության տեղիք չեն տալիս ազգային աղետի՝ կոտորածների, գաղթի և սովամահության օրերին էջմիածնի հոգևորականության մասնավոր շահադիտական գործունեությունն ու ցոփ խնջույքները. «Ոմանք միաբանության մեջ կատարվող ինտրիգաների վրա էին խոսում, ոմանք իրանց գաղտնի սպեկուլյացիաների վրա էին խոսում, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, թե ինչ է կատարվում իր շուրջը, ոչ ոք չէր մտածում այն բանի վրա, թե ինչպես ալաշկերտցիք, զրկված բնիկ երկրից, պանդուխտ, անտեր և անխնամ, ճանձերի նման կոտորվում էին: Ոչ ոք չէր հետաքրքրվում այն հարցով, թե ինչ էր եղել այդ թշվառների գաղթականության պատճառը կամ ինչ կլինի նրանց վախճանը մի օտար, անծանոթ երկրում»¹⁹:

Ուշագրավ է, որ Բաֆֆին հոգևորականության գործունեությունը քննում է կրոնի և եկեղեցու դերը կեղծելու տեսանկյունից: Անշուշտ, նաև

17 Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 275:

18 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 2, էջ 122:

19 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 4, էջ 381:

Գեղարվեստական պատկերներն ու սյուժետային միջադեպերը կրկին ու կրկին փաստելու են գալիս այդ ելակետային հրապարակախոսական դրույթի ճշմարտացիությունը: Նյութի ու հարստության ստորաբարո նվիրյալներն անգամ իրենց ենթագիտակցության խորքում ունեն խղճի և բարոյականության երկնային դատավորի հանդեպ արթուն մնացած ահի ու պատկառանքի տեսանելի նշմարներ: Սերգեյ Եզոբիչը («Մինն այսպես, մյուսն այնպես») կրոնական արարողությունների երկրպագուն և մշտական մասնակիցն էր: Ճանճուր Իվանիչը («Զահրումար») պարբերաբար իր մեղքերին թողություն էր տալիս: Հայ եկեղեցուն ակամա իր տուրքն է մատուցում անգամ «ավերված, փչացած, անբարոյականացած հասարակության հրեշավոր ծնունդը»՝ խաչագողը: «Խաչագողները մի առանձին նախանձախնդրություն և պատկառանք ունեն դեպի հայոց եկեղեցին և եկեղեցականները: Նրանք ամեն կրոնների (թե քրիստոնեական և թե հեթանոսական) հոգևորականի անունով հայտնվում են ազգերի մեջ, բայց երբեք իրենց հայ քահանա չեն ձևացնում հայ քահանայի անունը չխայտառակելու համար»²⁴:

Քավոր Պետրոսի և մյուս խաչագողերի արտաքուստ անսովոր և անհամոզիչ բարեպաշտությունը բնականաբար պետք է լուրջ մեկնության կարիք ունենար: Այս առումով ահա դիմելով նոր լուսաբանումների և փաստարկների՝ Րաֆֆին զարգացնում է գաղափարական ըմբռնումների մի ուրույն համակարգ: Եկեղեցու վերոհիշյալ ազդեցության վկայաբերումը, բնավ չբացառելով կրոնի հոգևոր-բարոյական խորհրդի անմատչելիության հանգամանքը, մի կողմից նպատակամղված էր հաստատելու չարի և բարու համատեղելիությամբ բնութագրվող մարդկային էության վերափոխման՝ Րաֆֆու լուսավորական կոնցեպցիան, իսկ մյուս կողմից դատապարտելու էր գալիս հոգևոր իշխանություններին, որոնք, նման մեծ հեղինակության տերը լինելով, այն չեն գործադրել ի շահ այդ վերափոխման: Ի դեպ, առաջին դեպքում հիմնավորապես պատճառաբանվում է քավոր Պետրոսի ինքնազոլումն ու հոգեփրկությունը, իսկ երկրորդ դեպքում եկեղեցու անտարբերության մեջ Րաֆֆին բացահայտում է նաև հանցակցության գործոնը: Էժանագին ապաշխարության սովորույթը՝ իբրև անտարբերության արգասիք, վերածվում է հանցակցության, քանի որ դրդապատճառ և շարժառիթ է դառնում նոր չարագործությունների. «Եվ նրա (Քավոր Պետրոսի - Ա. Հ.) սիրտը միշտ խաղաղ էր, և նրա խիղճը միշտ անդորր էր, որովհետև ամեն մի մեղանչելու դեպքում նա ուներ մի ապաստան՝ եկեղեցին, և մի առաջնորդ՝ իրան երկնքի հետ հաշտեցնելու համար՝ քահանան»²⁵:

24 Նույն տեղում, էջ 108:

25 Նույն տեղում, էջ 112:

Ինչպես արդեն նշվեց, պատմականորեն հիմնավորելով հայ հոգևորականության բարոյական անկումը և առաջնորդական կոչումից օտարումը՝ Րաֆֆին միաժամանակ չի շրջանցում այն փաստը, որ ժողովրդական հավատն ու նվիրվածությունը դեպի եկեղեցին, պատմականորեն որոշակիորեն արդյունավորվելով, կենդանի հասել են մինչ իր օրերը: Այս երկու ըմբռումների համադրման հիմքի վրա էլ ծավալվում են նրա հետագա ուսումնասիրությունները: Հայ եկեղեցու պատմական դերակատարության ու եկեղեցականների՝ Րաֆֆու անողորք քննադատությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքի գիտակցումով, որ պետականության բացակայության պայմաններում ազգային-հոգևոր արժեքների, մշակույթի և կրթության տնօրինությունն ու հովանավորությունը վերապահվել են եկեղեցուն: Չէ՞ որ դպրոցի անցած պատմական ճանապարհն ինքնին նույնանում է եկեղեցու անցած ճանապարհի հետ, հետևաբար և այն պիտի դառնար վերջինիս քաղաքականության լծորդը: «Եթե մի օր հայոց աստվածը կխնդրե Հայաստանի կործանման ու նրա զավակների արյան վրեժը, - հայտարարում է Րաֆֆու հերոսը, - առաջին պատասխանատուն կլինեն մեր եկեղեցականները: Դրանք թուլացրին ժողովրդի սիրտը, խլեցին նրա քաջությունը, մեռցրին նրա բոլոր կենսական ուժերը, և քրիստոնեական խոնարհության, քրիստոնեական համբերության անունով սովորեցրին նրան ստրուկ լինել»²⁶:

Եկեղեցու ինքնահաստատման և հոգևոր իշխանության ամրապնդման գործընթացը, Րաֆֆու համոզմամբ, պարունակում է պետականության քայքայման ու կործանման մասնակի դրդապատճառներ: «Այն օրից, - նշում է նա, - երբ մեր թագավորները, իշխաններն ու իշխանուհիները սկսեցին իրանց հարստությունը վատնել եկեղեցիների ու վանքերի թիվը բազմացնելու, այն օրից մեր գորությունը օրըստօրե թուլացավ, և մենք բոլորովին ընկանք»²⁷:

Գոհունակությամբ շեշտելով այն հանգամանքը, որ հայ եկեղեցին երբևէ ձիգվիտական գործունեություն չի ծավալել և այդպիսով գերծ է մնացել հոգևոր հարստահարության բարձրագույն ձևերից՝ Րաֆֆին միաժամանակ ընդգծում է, որ մենք չունենք նաև նպատակային և օգտավետ գործունեությամբ հատկանշվող վանական միաբանություններ: Այս առումով նա հայ հոգևորականության մեջ երկու հիմնական շերտեր է տեսնում՝ «ծույլ ու տխմար արեղաներ, որոնք մի որոշ նպատակի չեն ծառայում, որ վերաբերվում է հասարակության այս ու այն շահերին»²⁸, և «յուրյանց աշխարհից կտրված, ժողովրդից հեռացած և կյանքի հետ յուր հաշիվները

26 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 7, էջ 267:

27 Նույն տեղում, էջ 277:

28 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 9, Եր., 1987, էջ 22:

վերջացրած» անապատականներ: «Մտածել, գործել, որևիցե նպատակի ծառայել կարող են միայն կենդանի մարդիկ,- նշում է գրողը,- իսկ մերոնք զուրկ են կենդանությունից»²⁹:

Այս պարզաբանմամբ էլ ավելի է հիմնավորվում հայ հոգևորակա- նության պատմական դերի և նշանակության բացասման հեղինակային մի- տումը, որը, սակայն, նեղ կաղապարում չի ստանում, քանի որ, ինչպես նշվեց, այդ բացասումը կատարվում էր հոգևորականություն-կրոն հակադ- րության համատեքստում: Կրոնական ջերմեռանդությունը և բարեպաշտու- թյունը հետազոտելով իրենց ձևավորման պատմական գործընթացի մեջ՝ Րաֆֆին հավաստում է, որ դրանք վճռական և բախտորոշ դեր են ունեցել ազգային ինքնապահպանման հարցում: Դրա վառ արգասիքն է և այն փաստը, որ հայ ժողովրդի դարավոր թշնամիներն իրենց քաղաքական նկրտումները մշտապես երևան են բերել կրոնական սքողվածությամբ: Կրոնական է համարվել նաև նրանց դեմ մղված հերոսական պայքարը, քանի որ կրոնը, դիտվելով իբրև ազգային ինքնության կարևոր բաղադ- րիչ, դարձել էր նաև ազգային հավաքականության էական միավորիչ լծա- կը: Րաֆֆին այս կերպ զարգացնում է ժողովրդի ոգու անպարտելիության գաղափարը, որին մշտապես խարսխված է կրոնական հավատը: Գեղար- վեստական պատկերներում որոշակիորեն ընդգծվում է այս տեսակետի կիրառական հիմնավորումը, որի հստակ ձևակերպմամբ հանդես է գալիս նաև «Սամվելի» հերոսը. «Մեզ մնում է ժողովուրդը,- պատասխանեց Մու- շեղը խրոխտալի ձայնով,- թշնամին մեծ սխալ գործեց, և մենք այդ սխա- լից կարող ենք օգուտ քաղել: Թշնամին դիպավ ժողովրդի ամենաարբա- զան գզացմունքներին՝ նրա եկեղեցուն: Եթե քո հայրը և Մերուժան Արծ- րունին ճանաչած լինեին հայի սիրտն ու հոգին, նրանք պետք է ձեռնամուխ չլինեին դեպի եկեղեցին, այն ժամանակ, գուցե, կարող էին նվաճել Հա- յաստանը: Իսկ այդ ձեռնարկության մեջ, ես վստահ եմ, որ նրանք անպատ- ճառ տանուլ կտան»³⁰:

Պատմության դասերից արտածված ճշմարտությունները, որոնք կեր- պարանագործված են ազգային գոյամաքառման բախտորոշ ժամանա- կաշրջաններում, հիմք են դառնում Րաֆֆուն հասնելու ընդհանրացման: «Հայր ամեն բանի համբերում է,- նշում է նրա հերոսը,- ամեն թշվառու- թյուն տանում է, բայց նա համբերել չէ կարող, երբ բռնադատվում է նրա եկեղեցին, նրա միակ սրբարանը: Եկեղեցին հայի կյանքի նպատակն է և նրա բարձրագույն իդեալը»³¹:

29 Նույն տեղում, էջ 22:

30 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 8, էջ 48:

31 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 5, էջ 512:

Րաֆֆու հրապարակախոսական էջերում կրոնական խնդրի համակողմանի քննությունը մեծապես պայմանավորված էր եկեղեցու ունեցած հեղինակության և դերի վերոհիշյալ ըմբռնմամբ: Լուսավորական և ազգային-ազատագրական իդեալների գաղափարախոսը կրոնական գործոնը համարում էր այն հզոր կովանը, որին ձիշտ և նպատակասլաց ուղղվածություն տալով՝ կարելի էր այդ իդեալները կյանքի կոչելու երաշխիքներ ձեռք բերել:

Րաֆֆին ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «անկիրթ» և «անուս» հասարակության մեջ կրոնական և ազգային գաղափարները դեռևս հստակորեն սահմանազատված չեն: Կրոնական և ազգային պատկանելության իմաստային նույնացումը՝ իբրև հայ հասարակական գիտակցության անզարգացածությունը բնորոշող իրողություն, շատ արտահայտիչ է ներկայացվում նաև նրա հերոսների միջոցով. «Մենք եղբայրներ ենք կոչում միայն ավետարանով մեզ միացողներին, ինչ ազգից էլ որ լինեն նրանք, իսկ հեթանոսները մեր եղբայրները չեն, թեև մեկ մորից ծնված լինենք: Քրիստոնյայի հայրենիքը երկինքն է, իսկ այս երկիրը միայն մի ժամանակավոր իջևան է, այստեղից այնտեղ տեղափոխվելու համար»³²:

Եկեղեցական պատկանելությամբ հատկանշվող ազգային ինքնահամախմբման այդ իրողության ընկալումը, բնականաբար, Րաֆֆուն պետք է դրդեր անհաշտ պայքար մղելու կրոնական միության պառակտմանը նպաստող արտաքին և ներքին ազդեցությունների դեմ, որոնց թվում իր տազնապահարույց հետևանքներով առավել ընդգծվում էր օտարազգի քարոզիչների գործունեությունը: Դեռ 1858 թ. ապրիլի 20-ին Հովհաննես Ավետիսյանին հասցեագրված մի նամակում նա հենց այդ նկատառումով դատապարտությամբ է խոսում նորահիմն ամերիկյան ուսումնարանների մասին, որոնք՝ իբրև «գաղտնի մեքենա մոլորության», «զանազան ազգաց որդիքն որսալու» նպատակ են հետապնդում:

Ստեղծագործական հասունացմանն ու աշխարհընկալման ընդլայնմանը զուգահեռ՝ Րաֆֆին ավելի ու ավելի պարզորոշ է տեսնում քարոզիչների՝ առաքինության և բարեպաշտության քողով վարագուրված քաղաքական նկրտումները: «Բոլոր այն հրոսակները,- նշում է նա,- որ դարերի ընթացքում արշավանք են գործել Տարոնում, իրանց բարբարոսությամբ այնքան վնասներ չեն տվել, որքան կարող է տալ այդ հեզ, խոնարհ կրոնավորը, որ մի հասարակ ձիու վրա նստած, միայնակ, քրիստոնեական առաքինությամբ ահա այժմ այցելության է գնում այն գյուղը»³³:

32 Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 6, էջ 356:
33 Նույն տեղում, էջ 386:

Օտարազգի քարոզիչները, Րաֆֆու համոզմամբ, «հալածասեր» մահ-մեղականությունից շատ ավելի մեծ վտանգ են ներկայացնում, քանի որ եթե վերջինս իր ազդեցությունը բռնությամբ էր տարածում, ապա նրանք կրոնափոխում էին ձկուն դիվանագիտությամբ ու մարդասիրական քարոզներով: Բռնությունն ինքնին ծնում է հակազդեցություն, մինչդեռ միսիոներության հեշտ հաղթանակները խոր մտորումների տեղիք են տալիս: «Ինչ վերանորոգություններ պետք են Տաճկական Հայաստանին» հոդվածում քննության ենթարկելով օտարազգի քարոզիչների գործունեության և նրանց միջոցով իրականացվող դավանափոխության աճի հիմնական շարժառիթները՝ Րաֆֆին երևույթի հիմքում հայտնաբերում է մասնավոր և օտար պետական շահերի փոխհամատեղումը: Արտաքուստ զարմանահարույց հովանավորությունը, որ ստանում էին միսիոներները թուրքական կառավարությունից, անշուշտ ուներ իր հետին նպատակները: «Թուրքիայի խորամանկ քաղաքականությունը կարծես լավ էր ըմբռնել, թե ինչ նշանակություն ունի կրոնափոխությունը հպատակ քրիստոնյա ազգությունների մեջ, - նշում է Րաֆֆին: - Նա տեսնելով հայերին մի կրոնական ժողովրդի, որ ուրիշ հիմք չի ձանաչում իր ազգության, բացի եկեղեցին, միշտ աշխատել է զբաղեցնել նրան կրոնական երկպառակություններով, միշտ աշխատել է քակտել նրանց միությունը, թույլ տալով տարածվել հայերի մեջ կաթոլիկության և բողոքականության»³⁴:

Ի դեմս արևմտահայության շրջանում ձանաչում ձեռք բերած Հասունյանների կազմակերպության՝ Րաֆֆին տեսնում էր միսիոներության աղետաբեր հետևանքների առարկայական արտացոլումը: «Հասունյանը և յուր կուսակցությունը» հոդվածում պատմականորեն լուսաբանելով կաթոլիկ եկեղեցու հետ կրոնական միության միտող դարավոր մոլորությունը՝ Րաֆֆին անողոքաբար դատապարտում է ստրկամտության այդ երևույթի նորագույն դրսևորումը՝ Հասունյանների կուսակցության ձևով: Նրա և ընդհանրապես միսիոներական քաղաքական արշավանքի սկզբնապատճառները, Րաֆֆու համոզմամբ, պետք է որոնել հայ եկեղեցու անտարբերության և անգործության մեջ, սեփական պարտավորությունների կատարման մեջ նրա թերացումներում: Թարգիչներն իրենց նպատակին հասնելու համար գործադրում են բոլոր միջոցները՝ գրավիչ քարոզներից մինչև մարդկանց կենսապայմանների բարվոքում: Կրոնափոխության հիմնական շարժառիթը ոչ թե հավատն է կամ բարոյական ներշնչանքը, այլ նախ նյութական շահագրգռվածությունը, սեփական «Աստծու տաճարների» կամայականություններից ձերբազատվելու ցանկությունը, որոնք «ուրիշ մին օգուտ չունին, եթե ոչ բնակարան եղած են մոլի, հեշտասեր, ծույլ անձանց,

34 Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 319:

որոնք ընդունելով կրոնական անունն, ազգն հովվելու պաշտոն ստանալով, թողած են յուրյանց հոտն անտերունչ, անօգնական գայլոց ժանիքներում՝ ինքյանք առանձնացյալ են վանքերու սենյակներումն այնու ույր դյուրին միջոց գտանելով՝ ազգն կողոպտելու և յուրյանց անպիտան կյանքն վարելու»³⁵: Բաֆֆին քարոզիչների հաջողության և ժողովրդից ազգային եկեղեցու օտարացման հիմնական պատճառներից մեկը համարում էր վերջինիս արարողություններում «Աստծո կենդանի խոսքի» բացակայությունը: Գրաբար լեզվով կատարվող կրոնական արարողությունների հոգևոր և բարոյական էությանն անհաղորդ հայ մարդը հասու էր դառնում սոսկ դրանց արտաքին ծիսական կողմերին: Հակառակ այլադավանների կենդանի քարոզին, Բաֆֆու կարծիքով, առաքելական եկեղեցու հետ մարդուն կապում է միայն ձևային ու նյութական պարտավորվածությունը: Մինչդեռ «ինչ եկեղեցի աշխատում է միայն ծեսերի և արարողությունների գործությամբ պահել ժողովուրդը, նա հիմք չունի»³⁶:

Գրողն իր տեսակետները զարգացնելիս բնականաբար պետք է հանդիպեր եկեղեցական իշխանությանը ծնրադրող պահպանողական դիրքորոշում ունեցողների թշնամական վերաբերմունքին, հաղթահարեր նրանց կողմից պարտադրված, հաճախ պատշաճության սահմաններից դուրս եկող բանակոծիվները: Եկեղեցու վերափոխման՝ Բաֆֆու գաղափարը հակառակորդների կողմից մեկնաբանվում էր իբրև պարզապես եկեղեցու ժխտում, հերետիկոսություն, որի հեղինակը, «մի ամբողջ ազգի դարավոր սրբությունները խեղկատակության և եղեռնագործության որջեր շինելով... վեր է առնում մի ցեղի ահագին կտոր և նրանով ծեփում թե քրիստոնեական եկեղեցու պատերը և թե Քրիստոսի պաշտոնյայի երեսը»³⁷:

Անընդմեջ շարունակվող գրապայքարն ու ընդդիմադիրների անհանդուրժողականությունն անակնկալի չբերեցին Բաֆֆուն: Ընդհակառակը, հասարակական իրավակարգի և գիտակցության ուղղակի կապի ընկալումը բնավ չփոխելով, Բաֆֆին առաջադրված խնդիրների հրատապ լուծման առնչությամբ առաջին պլան մղեց զարգացման ու հասարակության արմատական վերափոխման լուսավորական կոնցեպցիան: «Հայերը Քաբուլի մեջ», «Մինչև երբ», «Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» հոդվածներում Բաֆֆին օբյեկտիվորեն հիմնավորում է հայերի այլադավանության իրողությունը՝ ընդգծելով, սակայն, կրոնն ազգության որոշիչ ու ելակետային գործոն համարող տեսակետների սնանկությունը: Հարցը միաժամանակ հետազոտելով քաղաքական իդեալների տեսանկյունից՝ նա հանգում է այն տեսակետին, որ «Ամեն մի ազգի միության գործը անհնար

35 Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 10, Եր., 1964, էջ 501:

36 Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 160:

37 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 10, Եր., 1991, էջ 92:

կլինի, եթե նույն ազգության գոյությունը պայմանավորվում է միայն եկեղեցու մեջ, և եթե այդ եկեղեցուց դուրս գտնված ցեղակիցները համարվում են ազգային մարմնի ամբողջությունից կտրված անդամներ»³⁸: Կրոնական բաժանվածությամբ պայմանավորված ազգային խորթությունը Բաֆֆին համարում էր անկրթության հետևանք, որը միայն ժամանակավորապես կարող էր գոյատևել: Նա չէր հապաղում շեշտելու, որ իր սկզբունքները, գիտական ճշմարտացիությունից զատ, հետապնդում են նաև քաղաքական նպատակներ, և կրոնն ազգության միակ որոշիչ օղակը համարող մտայնությունը հերքելով միայն կարելի է չեզոքացնել կրոնական երկպառակություն սերմանող՝ Թուրքիայի քաղաքականության հետևանքները:

Պատմության զարգացումն ու իրադարձությունների տրամաբանական ընթացքը երևան են բերում օրինաչափություններ, որոնք հաճախ միակ բանալին են դառնում ներկայի շատ «առեղծվածային» երևույթներ պարզաբանելու համար: Պատմությունն ունի նաև պատրանքներ, որոնք արդյունք են նրա նեղ, միակողմանի հետազոտության և անփորձ ունկնդրին նետում են «օպտիկական խաբեությունների» գիրկը: Տուրք տալով այդ պատրանքներին՝ բացառել մի ազգության համար զարգացման պատմական օրենքները, հեռացնել նրան համայն մարդկության համար պատմության «գծած ուղուց» նշանակում է տանել նրան դեպի կործանում: Ահա այդ օրենքների անտեսումն է, Բաֆֆու համոզմամբ, կրոնի և ազգության նույնացման երևույթի կենսունակության պատճառը: Չէ՞ որ ժողովուրդներն ու կրոնը ծագումնաբանորեն համատեղելի չեն: Ժողովուրդների զարգացման ընթացքում կրոնները մշտապես փոփոխվել են, հետևաբար դրանք ոչ մի դարաշրջանում, ինչպիսի կարևոր նշանակություն էլ ունենան, չեն կարող դիտվել որպես այդ ժողովուրդների գոյատևման միակ հիմքն ու պայմանը:

Շարունակելով զարգացնել իր հայացքները՝ Բաֆֆին ի մի է բերում այն հիմնական, որոշիչ գործոնները, որոնք գոյաբանորեն կարող են բնորոշել ազգությունը. լեզու, հայրենիք, եկեղեցի և «ցեղական» առանձնահատկություններ: «Մենք միշտ ասել ենք և դարձյալ կկրկնենք, - նշում է նա, - որ ազգության գաղափարը պայմանավորվում է ոչ թե կրոնով, այլ նրա ցեղական հատկություններով, որոնց մեջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է և միշտ կլինի ազգի պահպանության հիմքը»³⁹:

Բաֆֆու համոզմամբ՝ մարդկանց միջև գործող բազմաթիվ կապերից առաջնայինը ազգակցական կապն է, որից արտածված **ազգայնության գաղափարը** պետք է գերադասվի ազգության տարբեր անդամներին հա-

38 Նույն տեղում, էջ 26:
39 Բաֆֆի, Երկերի ժողովածու. 10 հատորով, հատ. 9, էջ 501:

նության, ուստի նաև կրթական ոլորտում նրա ունեցած վճռական դերի գիտակցումով պայմանավորված՝ հոգևորականության քննադատությունը Րաֆֆու հակառակորդների կողմից որակվում էր իբրև եկեղեցու բացատում ու սրբապղծություն, ինչը հիմք դարձավ Րաֆֆու համար «Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը»» հողվածում լրացուցիչ անգամ լուսաբանելու հրապարակախոսի իր դիրքորոշումը: Հայտնելով, որ բարեփոխման իր նկատառումները բնավ հեղաշրջման միտում չունեն, գրողը չէր հապաղում շեշտելու, որ առողջ և գործուն դպրոցի հաղթանակը հայ իրականության մեջ անհնար է պատկերացնել առանց նրա տնօրինությունը ստանձնած հաստատությունների, ի թիվս դրանց՝ նաև եկեղեցական կազմակերպության առողջացման ու վերափոխման: Այդպիսի դպրոցի ստեղծման, դպրոցական կյանքի բարելավման հիմնարար պայմանը, Րաֆֆու համոզմամբ, «մանկավարժության կանոնավոր կազմակերպության» ստեղծումն էր, որը, վարչահրամայական ապարատից մարդու ստրկական կախվածությունը բացառելով հանդերձ, պետք է բացառեր նաև կամայականության ամեն մի դրսևորում, նպատակամղվեր արդյունավետ, նպատակաուղղված ուսուցման: Ժողովրդական վերահսկողությունը, խնամքով մշակված դպրոցական ծրագիրն ու կանոնադրությունը համարելով կրթական համակարգի էական բաղկացուցիչ տարրերը՝ «Ժողովրդական վարժապետներ» հողվածում Րաֆֆին առաջադրում էր դպրոցում ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի զարգացման անհրաժեշտության գաղափարը: «Մասնագետը մի շտեմարան է, - գրում է նա, - որի մեջ ամբարված են իր արհեստի վերաբերյալ զանազան մթերք, որոնք օտարի արդյունաբերության գործ են: Նա խոսում է, դատում է, վճռում է միշտ օտարի խելքով: Մասնագետը զգույշ է և երկչոտ է: Նա կարող է լավ թարգմանել, բայց ոչ ստեղծել, նրա մեջ ինքնուրույնություն չկա»⁴³: Մինչդեռ թերուսը մի «ինքնուս փիլիսոփա» է, որը «ընդհանուր մարդկային ճշմարտությունները դուրս է բերում իր սեփական աշխատանքով, իր մտածություններով ու փորձերով»⁴⁴:

Րաֆֆին, անշուշտ, չի անտեսում այս երկու տեսակների դրական հատկանիշները խտացնող երրորդ տարբերակը, երբ մասնագիտական ձեռքբերումներին զուգակցվում են սեփական փորձն ու դատողությունը: Ավելին, նրա կարծիքով, միայն այդ վերջինի արմատավորումը կարող է կրթական գործի կատարելության հիմնական նախապայման դառնալ: Իսկ դրա համար հայ իրականության մեջ կայի՞ն արդյոք նախադրյալներ: Գրողի ակնկալիքներն ակնհայտորեն կապվում են Եվրոպայում կրթություն ստացող հայ երիտասարդների հետ: «Հասուն մանկտին, - նշում է նա, - ամեն ազգի մեջ և ամեն ժամանակներում եղել է ազատության սիրահար,

43 Նույն տեղում, էջ 291:

44 Նույն տեղում, էջ 293:

բռնության թշնամի, առաջադիմության առաջնորդ և լուսավորության առաքյալ»⁴⁵:

Բայց և այնպես, Բաֆֆին այս հարցում ևս գնահատման միօրինակություն հանդես չի բերում: Անհատի ձևավորման հարցում միջավայրի վճռորոշ նշանակության ըմբռնումը նրան դրդում էր իր լուսավորական ծրագրերի իրականացման հույսերն առավելապես կապելու գերմանական կրթության հետ: Ռուսական անառողջ հասարակական կյանքը և «համաշխարհական Բաբելոն» Փարիզը հայ ուսանողի մեջ զարգացնում են միայն շվայտություն և կոսմոպոլիտիզմ, մինչդեռ «գերմանական համալսարաններում ամեն ինչ առաջնորդում է ուսանողին դեպի արհեստի և գիտության խորին ուսումնասիրությունը»⁴⁶: Ուսանող երիտասարդներին համարելով այն հիմնական ուժը, որը պետք է կերտեր ապագա դպրոցը, Բաֆֆին առավել մեծ հույսեր էր կապում «ժողովրդի ծոցից» դուրս եկած ունեզուրկ ուսանողության հետ, որն իր մեջ խտացնում էր գործչի բոլոր լավագույն գծերը և ուներ ինքնաշխատությամբ ձեռք բերված կրթական բարձր մակարդակ: Նրան հակադրելով «դիպլոմատ» երիտասարդների մեկ այլ որակի՝ «թաթոսականությանը»՝ գրողը կարծես հայտնաբերում է ապագայնացման դրոշակակրին: Ջելս և շվայտ կյանքի սովորույթներից բացի՝ նրանք օտար երկրներից բերում են նաև օտար լեզուն, որն էլ դառնում է դպրոցական դասավանդման լեզուն: «Ջարմանալին այն չէ, որ դպրոցները լցված են ըստ մեծի մասի հայ աշակերտներով, - նշում է գրողը, - այլ այն, թե որպես այդ ողորմելի հիմնարկություններից դուրս են գալիս նշանավոր մարդիկ, որ սովորել էին միայն ժուսերեն գրել, կարդալ և սխալներով խոսել»⁴⁷: Այս հանգամանքը, ըստ Բաֆֆու, կրկին կարևորում է դպրոցական մանկավարժական կայուն համակարգի ստեղծումը, որի հետ հաշվի պետք է նստի ամեն մի մանկավարժ: Դրա իրավունքն իրեն չվերապահելով հանդերձ՝ Բաֆֆին դիմում է այդ համակարգի մի շարք կարևոր կողմերի լուսաբանմանը: Դպրոցը պետք է լինի ազգային և իբրև այդպիսին բնութագրվի ազգային պատմության, մատենագրության և լեզվի ուսուցման բարձր մակարդակով: Այդ գաղափարը, ի դեպ, նա արտահայտում է նաև Ներսես կաթողիկոսի շուրթերով. «Եթե մի օր նախախնամող կամքը, իմ նախահարց նման կկոչե ինձ հայրապետական աթոռի վրա, իմ առաջին հոգսը կլինի հայ եկեղեցու ընթերցվածները մայրենի լեզվի վերածել և հայ ժողովրդի կրթության գործը ազգային բուն հիմունքների վրա դնել»⁴⁸:

Հետաքրքիր է նաև կրոնի ուսուցման՝ Բաֆֆու ըմբռնումը: Նա այն կարևորում է նախ բարոյական ազդեցության և ազնիվ ներշնչանքի տե-

45 Նույն տեղում, էջ 424:

46 Նույն տեղում, էջ 431:

47 Նույն տեղում, էջ 407:

48 **Բաֆֆի**, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 8, էջ 74:

սանկյունից: «Կրոնի դասատվությունը հարկավոր է մեր դպրոցներում և շատ հարկավոր,- գրում է նա «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» աշխատության մեջ,- բայց ոչ թե այն բաները, որոնց մեջ մինչև անգամ բարձր աստվածաբանությունը խարխափելով է պտտվում: Իմ կարծիքով, այնպիսի փոքրիկների հետ ավելի օգտավետ կլիներ պարապել Սուրբ գրքի այն տեղերից, որ նրանց վերա բարոյական ազդեցություն ունենային»⁴⁹:

Բաֆֆու լուսավորական ծրագրերում առանցքային նշանակություն ունեցող դպրոցի հիմնահարցը գրական առաջին իսկ քայլերից մշտապես ուղեկցել է նրա ստեղծագործությանը: Տարբեր կերպարների միջոցով (Ռուստամ «Սալբի», Ստեփան «Ոսկի աքաղաղ», Համր՝ «Խաչագողի հիշատակարանը» և այլն) այդ հարցի լուսաբանման ու գեղարվեստական կերպավորման ընթացքում նա կուտակում է մեծածավալ նյութ՝ իդեալական դպրոցի լիակատար և ամբողջական պատկերը կերտելու համար:

Ինչպես արդեն նշվեց, Բաֆֆին անխտիր քննադատության էր ենթարկում և՛ հոգևոր (տեղ Թողիկ), և՛ աշխարհիկ (Սիմոն Պատվելի) կրթական հաստատությունները՝ առաջ քաշելով դրանց արմատական վերափոխման անհրաժեշտությունը: Ըստ այդմ էլ, ի հակակշիռ նշվածների, Հայրիկի և Կարոյի հաստատությունների օրինակով («Կայծեր») նա ամբողջացնում է իդեալական կրթօջախների պատկերը: Որքա՞ն բնորոշ է Վարագա վանքը: Այն միայն աղոթատուն և եկեղեցական քարոզի վայր չէ, այլ իր մեջ խտացնում է 5-րդ դարի լուսավորական-բարեգործական հաստատության բոլոր լավագույն կողմերը: Նախ և առաջ դպրոց է, որտեղ իսպառ բացակայում է ծեծը: Կան դասասենյակներ, դասատվության պարագաներ ու ծրագրեր, վարժապետի բարձր պատրաստվածություն և գիտական մակարդակ: Հոգևոր այդ հաստատությունն ունի նաև երկրագործական բաժին, որտեղ աշակերտները հմտանում են երկրագործության այլազան բնագավառներում: «Իմ համոզմունքն այն է, պարոն բժշկապետ,- ասում է Բաֆֆու հերոսը՝ Հայրիկը,- որ մեր մանուկների կրթության հետ պետք է կապված լինի և այն նպատակը, որ նրանք, բացի լավ քրիստոնյա լինելուց, դառնան և լավ արհեստավորներ և լավ հողագործներ... Եվ հենց այդ նպատակով ես միացրի այդ դպրոցի հետ և երկրագործական բաժին, իսկ եթե կհաջողվի ինձ, ժամանակով կավելացնեմ և մի արհեստանոց»⁵⁰:

Հայրիկը դպրոցում գյուղատնտեսական գիտելիքների և համապատասխան դասընթացի ներմուծումը համարում է տնտեսական զարգացման ու ժողովրդի կենսամակարդակի բարելավման խթանիչ միջոցներից մեկը: Գրեթե նույն կերպ է դատում նաև Ռշտունյաց գյուղի վարժապետը՝

49 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 9, էջ 217:
50 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 6, էջ 176:

հիմնավորելով, որ դպրոցը վերհրական մեկուսի մի «գիտադարան» չէ, այլ կոչված է ծառայելու կյանքի պիտույքներին: Ռշտունյաց գյուղը վարժապետի շնորհիվ արդեն ականջալուր է ազգային ինքնագիտակցության և բանականության ձայնին: Հարուստ գիտելիքների հետ մեկտեղ այն «սպարտական» կյանքով ապրող իր վարժապետից յուրացրել է նաև «գազանների մեջ» գոյատևել կարողանալու ինքնապաշտպանական շնորհը: «Մենք այդ բոլոր փոփոխություններով պարտական ենք մեր սիրելի վարժապետին, - նշում է Րաֆֆու հերոսը: - Նա բաց արեց թե մեր աչքերը և թե մեր կապված, կաշկանդված ձեռքերը: Նա մտցրեց մեր մեջ անձնապաշտպանության ոգին, սովորեցրեց բարեկամի հետ բարեկամ լինել, թշնամու հետ թշնամի: Նա որքան շատ ուսում ունի, միևնույն ժամանակ շատ քաջ մարդ է: Նա իմանում է լավ հրացան արձակել և մեր երեխաներին ևս սովորեցնում է նշան խփել: Նա իմանում է ծովում լող տալ և մեր երեխաներին ևս սովորեցնում է ջրի հետ այնպես խաղալ, ինչպես ցամաքում: Ուրիշ ինչեր չէ սովորեցնում նա»⁵¹:

Րաֆֆու լուսավորական և մանկավարժական հայացքներում լայն տեղ է գրավում նաև ընտանիքում և առհասարակ հասարակական կյանքում կնոջ դերի լուսաբանումը: «Հայ կինը» մենագրության մեջ կնոջը բնութագրելով իբրև «մարդկային ընկերության գլխավոր քաղաքակրթիչ տարր»՝ Րաֆֆին փորձում է ներկայացնել այն գործոնները, որոնք, վաղ մանկական հասակից ներգործելով, կնոջ մեջ ստրկական հոգեբանություն են պատվաստում: Զանազան պառավների, ինքնակոչ վարժապետների մոտ ստացած կրթությունը և ընտանիքի միապետական կազմակերպության բռնակալությունը կնոջը զրկում են ինքնուրույն մտածողությունից՝ դարձնելով նրան սոսկ կրավորական մի էակ: Կանոնավոր կրթության բացակայությունը, մտավոր զարգացման այդ արհեստական խոչընդոտումը գրողը հիմնական նախապատճառն է համարում հայ իրականությանն այնքան բնորոշ կանացի բնավորության երկու հակադիր տիպերի գոյացման՝ ստրուկի և քաղքենու: Առաջինը բնորոշ է գյուղական և արհեստավորական միջավայրին, իսկ երկրորդը՝ հարուստ դասին, որը, հեղինակի կարծիքով, «հեռացել է արևելքից, բայց դեռ չէ մոտեցել արևմուտքին»: Այս երկու տիպերի հիմքում ընկած է կեղծ, տարապայման կրթությունը, որը եթե նախկինում խիստ նահապետականության կնիքն էր կրում, ապա այժմ դարձել է նաև օտարալեզվության և ապագայնացման տարածման միջոց: Րաֆֆու ստեղծագործության մեջ վերջինիս գոհերը բազմաթիվ են և անհատական կերտվածքով ոչ միանման՝ Սոֆի, Նինո («Ջահրումար»), Անիչկա («Մինն այսպես, մյունն այնպես») և այլն: Հեղինակը նկատում է՝

51 Նույն տեղում, էջ 309 և 312:

թերի ուսումը և անհիմն կրթությունը երբեմն առաջ են բերում տարապայման անձնավորություններ, և այդ պատճառով զարմանալի չէ, որ թերուները հաճախ դառնում են նաև «նիհիլիստկաներ»: Նա անընդունելի և անժամանակ է համարում կնոջ ազատության եվրոպական կարգախոսների նորամուծումն ու այդ առթիվ մամուլում հաճախակի հանդիպող բանավեճերը: «Քանի կինը բարոյապես և իմացականապես լավ չի կրթված իբրև մարդ,- նշում է նա,- նա չունի իրավունք պահանջելու ձեր ասած ազատությունը կամ հավասարությունը»⁵²:

Բաֆֆին, անշուշտ, մեծ կարևորություն էր տալիս կնոջ հասարակական գործունեությանը: Ի վերջո, նա հասարակական կյանքի զարգացման գլխավոր խոչընդոտներից մեկը համարում էր հենց այդ գործունեության բացակայությունը: Նրա համոզմամբ, սակայն, առաջին քայլը պետք է լինի ճշմարիտ կրթությունը, որը կնախապատրաստի կնոջը հասարակական ասպարեզ դուրս գալու: «Նախքան կնոջն աշխարհ դուրս հանելը,- նշում է նա,- պետք է նրան նախապատրաստել աշխարհի համար, և դրա մեջ պետք է լինի կնոջ կրթության բուն խորհուրդը»⁵³: Գրողն այս տեսակետից էլ ավելի հրատապորեն է ընդգծում երկսեռ դպրոցների ստեղծման անհրաժեշտությունը: Կինը ոչ միայն կյանքի ընկեր է և կողակից, այլև ընտանիքի մայր, որն իր ստացած դաստիարակությունը կամա թե ակամա փոխանցելու է հաջորդ սերնդին: «Պարոններ,- ընդգծում է նա,- եթե դուք ցանկանում եք կրթված զավակներ ունենալ, դրա համար էլ հարկավոր է կրթված մայրեր պատրաստել, և այդ պետք է սպասել մի օրիորդաց դպրոցից»⁵⁴:

Նահապետական կենսակերպը, հարյուրամյակներ շարունակ բանտարկելով կնոջը, նրան թեև անկամ, բայց միաժամանակ և անարատ է պահել: Ուստի հմուտ ձեռք է պետք, նշում է Բաֆֆին, ճշմարիտ ուսում, որպեսզի նա «հում նյութից» դառնա «քաղաքակրթող տարր»: «Մեծ բարերարություն արած կլինի կնոջ սեռին այն մարդը, որ լուսավորության կայծը կմտցնի ամենախուլ գյուղական խրճիթներում. այդ լույսը միայն կարող է նրան առաջնորդել և դուրս բերելով տնային փակ շրջանից, կանտ նրան հասարակական ընկերության անդամ»⁵⁵:

Ազգային-հասարակական կյանքում կնոջ անփոխարինելի դերի ըմբռնումն են հավաստում նաև գեղարվեստական բազմաթիվ պատկերներ՝ գործնականում հիմնավորելով գրողի տեսական մտքերն ու դիտողությունները: Որքա՛ն բնորոշ են Մարոյի, Թելլի խաթունի («Կայծեր»), Սառայի («Դավիթ Բեկ»), Նենեի («Խաչագողի հիշատակարանը») և բազում

52 Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 357:

53 Բաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հատ. 3, Եր., 1984, էջ 151:

54 Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 9, էջ 378:

55 Նույն տեղում, էջ 357:

այլ կերպարներ, որոնց միջոցով հեղինակը մեծ հմտությամբ ձևակերպում է կնոջ, դստեր, մոր, քրոջ, անգամ իշխանուհու և թագուհու մեծ առաքելությունը ազգային-քաղաքական կյանքում: Բայց և այնպես, վեպերից զատ, նման օրինակներ տալիս է նաև իրականությունը, միայն թե, նշում է գրողը, հարկավոր է գտնել դրանք, գնահատել և իմաստավորել, փայփայել ու զորավիգ դառնալ: Ահա այդպիսի մի օրինակ է «Ֆրեդրեկայն» անունը կրող կանանց կազմակերպության ջանքերով հայալեզու մի մանկապարտեզի բացումը Թիֆլիսում: «Ո՞ր հայ մարդու սիրտը չէր բաբախի այդ տեսարանից, - գրում է այդ առթիվ Րաֆֆին: - Հայ կինը անվախ, համարձակ բարձրանում է ամբիոնի վրա և խոսում է այնպիսի նյութի վրա, որպիսին մանուկների դաստիարակությունն է: Մի սրտաշարժ տեսարան, մի ապացույց, որ հայ կինը զարթնել է, նա խոսում է, նա գործում է»⁵⁶:

Այսպիսով՝ Րաֆֆու լուսավորական գաղափարների հիմքում ընտանիքն ու դպրոցն էին, որոնք վերափոխվելով պետք է ծառայեին կրթության և դաստիարակության նորօրյա պահանջներին, իսկ այն հաստատությունը, որը, ունենալով անվիճելի ազդեցություն, կարող էր ծանրակշիռ ներդրում ունենալ այդ առաքելության իրականացման հարցում, եկեղեցին էր: Վերջինս, սակայն, նախ և առաջ պետք է դրան գիտակից և ունակ դառնար՝ ձերբազատվելով իր թերություններից և հետևելով իր բուն կոչմանն ու նախնյաց լավագույն ավանդույթներին: Իսկ այն առանցքը, որ պետք է համախմբի լուսավորչալ ազգի և հասարակության բոլոր անդամներին, ինչպես ընդհանրացնում է Րաֆֆին, ոչ թե կրոնը կամ դավանանքն է, այլ ազգային ինքնագիտակցությունը, այլ կերպ ասած՝ **ազգայնությունը**՝ իր բնորոշ հատկանիշներով, որոնց շարքում առաջին տեղը զբաղեցնում է լեզուն:

Աշոտ Ն. Հայրունի – ունի 7 գիտական մենագրություն, որոնցից 3-ը՝ գերմաներեն, և շուրջ 200 գիտական հոդվածներ, որոնց զգալի մասը լույս է տեսել Գերմանիայում գերմաներենով: Զբաղվում է Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, Առաջին աշխարհամարտին, Հայաստանի Հանրապետությանը և հայ-գերմանական հարաբերություններին վերաբերող խնդիրներով:

Էլ. հասցե – hayruniashot@gmail.com

56 Րաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. 10, էջ 49:

Summary

RAFFI'S VIEWS ON ENLIGHTENMENT AND PEDAGOGY

Ashot N. Hayruni

Doctor of Sciences in History

Key words – Ter Todik, Hayrik, church, Simon Patveli, ideal educational institution, moral machine, Chanchur Ivanich, tatosism, Mushegh, national peculiarities, Nerses the Great, civilizing element.

The family and school occupied an important place in Raffi's ideological worldview in reaching societal enlightenment and national unity. According to him, these two important social structures were important vehicles for transforming any given individual, which through enlightenment would lead to the desired success. According to Raffi, both of these institutions were not prepared and unable to serve the nation's progress and enlightenment, since fundamentally their practices had remained in the past with inhumane beatings, punishments, with highly illiterate teachers who showed despotic behavior and lack of pedagogical skills.

While analyzing the many flaws in the upbringing and education of Armenian children within the family and schools, Raffi pointed out that these in turn greatly stifled the individual from fully understanding his or her national identity, thus effectively also hindering a proper development of the Armenian society at large. According to Raffi, the main culprit for this was the Church, which yielded greatest influence upon the society and was the main unifying factor of its members, thus, the latter could become the torchbearer for enlightenment and progress, if only it would be able to fulfill this role. After conducting a comprehensive study of the historic path of the Armenian Church, Raffi concluded that the Church had lost its moral compass and had strayed from the path of leadership. Raffi pointed out that Armenian priesthood had to undergo a reform, only after which, it could once again take up the mantle of educating and enlightening the Armenian society at large.

The writer, thus, emphasized the importance of reforming family and school education, which in turn, would transform the society by instilling within the individual ideals of enlightenment. For this task Raffi especially emphasized the important role of the Church.

According to Raffi, the school had to have a stable school curricula and methodological guidebooks, its teachers should have received specialized training, national values should have been underlined and highly emphasized in subjects like Armenian History. Raffi also placed importance in teaching Theology, in particular, teaching the children those parts of the Bible, which developed a sense of morality. Raffi also criticized the view that the religious denomination and national origin were one and the same. He pointed out that national origin and religious affiliation could not be equated, since the two had different historic origins. He pointed out that a religion of a given people would throughout history often change, thus no matter what an important role the given religion had played for a people, it could not fully constitute the totality of their national identity and existence. The core, which according to Raffi could unify all of the members of an enlightened nation and society, was national self-consciousness, which could be gained after proper understanding and self-realization of national identity, which according to him was first and foremost based upon the use of a common language.

Резюме

ПРОСВЕТИТЕЛЬСКИЕ И ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ РАФФИ

Ашот Н. Айруни
Доктор ист. наук

Ключевые слова - тер Тодик, Айрик, церковь, Симон Патвели, идеальное образовательное учреждение, машина морали, Чанчур Иваныч, татосианство, Мушег, родовые особенности, Нерсес Великий, цивилизаторский элемент.

В идеологической концепции просвещения и национального объединения Раффи важное место занимает проблема преобразования семьи и школы как важных институтов формирования и воспитания личности, т.к. без них, по мнению писателя, ни одна просветительская деятельность не может увенчаться успехом. По словам Раффи, оба института не будут готовы и способны служить прогрессу и просвещению нации до тех пор, пока их образовательно-воспитательная деятельность с её бесчеловечными избиениями и наказаниями, невежеством учителей, произволом и незнанием своего педагогического дела, радикально не изменится.

Анализируя недостатки семейного и школьного воспитания в армянской действительности, препятствующие формированию личности, осознающей свою национальную идентичность, и, соответственно, препятствующие формированию общества, Раффи утверждал, что ответственность за это лежит на церкви, которая являлась главным звеном, объединяющим членов общества, и в настоящее время оказывает сильное влияние на общество. Соответственно, она могла бы стать знаменосцем просвещения и прогресса, если бы была компетентной для выполнения этой миссии. Подробно исследуя историю духовенства, Раффи констатирует, что за время своего существования оно было деморализовано и отчуждено от своего предводительского назначения, и указывает на необходимость преобразования армянского духовенства. Только в этом случае оно сможет вновь играть значительную образовательно-воспитательную роль в армянской общественной жизни.

Писатель реализацию своих просветительских идей о преобразовании общества видит в реорганизации институтов, имеющих важнейшее значение в формировании личности, – семьи и школы, и подчеркивает особую роль церкви в этом процессе. По словам Раффи, школа должна иметь стабильные школьные программы и методические указания, быть укомплектованной профессионально подготовленными учителями, быть национальной, и как таковая, должна характеризоваться высоким уровнем преподавания национальной истории, библиографии и языков. Писатель отмечает и важность преподавания религии, а именно: школа должна приобщать детей к тем фрагментам из Священного Писания, которые важны с точки зрения восприятия нравственности и развития вдохновения.

Раффи резко критикует представление некоторых группах армян, которое основывается на отождествлении религии и национальности, призывая избавиться от этого: ведь народы и религии несовместимы. В процессе развития наций религии всегда подвергались изменениям, поэтому их нельзя рассматривать как единственную основу и единственное условие существования этих народов в любую эпоху, независимо от того, насколько важную роль они играли в обществе. А стержнем, который должен скрепить всех членов просвещенной нации и общества, по убеждению Раффи, являются национальное самосознание, восприятие и оценка особенностей национальной идентичности и нации, среди которых первое место занимает язык.

REFERENCES

1. “Raffin zhamanakakits‘neri husherum”, Yer., 1986 **(In Armenian)**.
2. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 10 hatorov, hat. 4, Yer., 1962 **(In Armenian)**.
3. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 10 hatorov, hat. 7, Yer., 1964 **(In Armenian)**.
4. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 10 hatorov, hat. 9, Yer., 1964 **(In Armenian)**.
5. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 10 hatorov, hat. 10, Yer., 1964 **(In Armenian)**.
6. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 2, Yer., 1983 **(In Armenian)**.
7. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 3, Yer., 1984 **(In Armenian)**.
8. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 4, Yer., 1984 **(In Armenian)**.
9. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 5, Yer., 1985 **(In Armenian)**.
10. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 6, Yer., 1986 **(In Armenian)**.
11. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 7, Yer., 1985 **(In Armenian)**.
12. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 8, Yer., 1986 **(In Armenian)**.
13. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 9, Yer., 1990 **(In Armenian)**.
14. **Raffi**, Yerkeri zhoghovatsu 12 hatorov, hat. 10, Yer., 1991 **(In Armenian)**.